

կամ « վանք պատմութեան »¹» (Փաւս. 205): Ասոր հակառակ էր պարսկական սովորոյթը, որով Սասանեան արքայք թագ ի զուխ կը ճաշէին, եւ որոց կը համակերպին մեր թագաւորք ալ՝ երբ անոնց սեղանին վրայ են (նոյն, 134), մինչդեռ Յոյներն ու Հռովմայեցիք իրենց քանդակաց մէջ բացազուխ են սովորաբար (Գար. Ա, 1274-9), եւ ետրուրական ճաշանկար մը ցոյց կու տայ կոչնականաց գլխին ժպտաւինածեւ վարսակալն ալ՝ նման Հայոց (անդ, 1274):

Հայք կը հանէին նաեւ սամոյրը կամ ուրիշ մուշտակներ՝ որոնք թագաւորին եւ իշխանաց արտաքին թիկնոցի տեղ էին (նոյն, 118, 263), եւ զոր տեսանք նաեւ վասակայ վրայ (աստ, 151): Այսպէս Պապայ խնճոյից մէջ Գղակ մարդպետն հազած էր վարտիս, եւ անոր վրայ պատնռձանը՝ զսպուած գօռտով, եւ ոտներուն մոյկեր. իսկ մուշտակ չունի (Փաւս. 204): Մեծն Ներսէս ալ արքունի սենեկապետութեան պաշտօնին մէջ կը նկարագրուի պատմութեանով միայն՝ իբր արտաքին ըզգեստ (նոյն, 69): — Բայց կոչնականք

1. Այդ բանը, ծագած հայ և պահլ. պատմութեանէն (Հիւրշ. 224), ի Գ. թագ. ԻԲ, 14 գործածուած է փոխան յն. ἱματιοφύλαξι, որ է հանդերձապետ: